

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ  
И НАУКИ

МИНИСТР

REPUBLIC OF ARMENIA  
MINISTRY OF EDUCATION  
AND SCIENCE  
MINISTER

0010, Երևան, Գլխավոր պառտու, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,  
0010, Երևան, Главни́й проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: minister@edu.am, www.edu.am

N..... ".....-201 թ.

Հայաստանի Հանրապետության  
տարածքային կառավարման նախարար  
պարոն Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գևորգյան

Սահմանված կարգով Ձեր քննարկմանն են ներկայացնում «Կրթության պետական տեսչության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Խնդրում են Ձեր կարծիքը նախագծի վերաբերյալ:

Հարգանքով՝

Ա. ԱՇՈՏՅԱՆ

Կատ.՝ Հ. Մանուկյան  
/հեռ. 52 48 56/



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

Ք. Գավառ, Գ. Լուսավորչի փ. 36  
հեռ. /0264/2-34-31

N-----

«-----» ----- 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ, ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ  
ՊՐՆ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ  
(Ձեռ' 06.05.2011թ. N 01/15/2833-11)

Մեծարգո փոխվարչապետ

Ձեզ է ներկայացվում <<Կրթության պետական տեսչության մասին>> Հայաստանի  
Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>  
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ մեր  
առաջարկությունները:

Առդիր 2 թերթ:

Հարգանքով՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ

Գ. Բաղայան  
2-34-40

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՏՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ  
ՆԱԽԱԳԾԻ /ԱՅՍՈՒՎԵՏԵՎՆԱԽԱԳԻԾ/ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «<հանրակրթության և մասնագիտական կրթության բնագավառներում>> բառերը, որովհետև արդեն վերը նշվել է «<կազմակերպություններում>> կարգավորվող գործընթացը, որը նախադասությանը տալիս է ավարտուն տեսք:
2. Նախագծի 1-ին հոդվածում «պետական կրթական չափորոշիչների կիրառման» բառերը առաջարկում ենք փոխարինել «պետական կրթական չափորոշիչների պահանջների կենսագործման» բառերով, որովհետև պետական կրթական չափորոշիչը, /որը ըստ «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ նորմատիվ է/ պետք է, պարզապես, կենսագործել:
3. Նախագծի 1-ին հոդվածում «ինչպես նաև կրթության կազմակերպման կանոնադրական» բառերը առաջարկում ենք փոխարինել «ինչպես նաև կրթության կազմակերպման օրենսդրական և կանոնադրական» բառերով:
4. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին պարբերության մեջ «պետական վերահսկողության» բառերից առաջ առաջարկում ենք ավելացնել «կրթության պետական տեսչության կողմից» բառերը:
5. Նախագծի 2-րդ հոդվածում «սույն օրենքով» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «իր կանոնադրությամբ» բառերով, իսկ իրավական ակտերի շարքում թվարկել նաև «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը» և «Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգիրքը»:
6. Նախագծի 4-րդ հոդվածում «<համագործակցություն>> և «<օժանդակություն>> բառերը փոխարինել «<համագործակցության>> և «<օժանդակության>> բառերով:
7. Նախագծի 7-րդ հոդվածում նշված է «Օրենքի 6-րդ հոդվածում  
1) հոդվածի վերնագրում... հանել «իրականացնել» բառը,  
2) 1-ին պարբերության մեջ... հանել «իրականացնել» բառը, մինչդեռ «Կրթության տեսչության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի վերնագրում և 1-ին պարբերության մեջ «իրականացնել» բառը չկա, որ հանվի:
8. Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում առաջարկում ենք հանել «արդյունավետության» բառը:
9. Նախագծի 10-րդ հոդվածի առաջին պարբերության մեջ «<Հանրապետության օրենքով>> բառերից հետո առաջարկում ենք լրացնել «և այլ իրավական ակտերով» բառերը:
10. Նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «<ա>> ենթակետում «<ստորաբաժանումների>> բառից հետո առաջարկում ենք լրացնել «<(բաժինների)>> բառով:
11. Նախագծի 13-րդ հոդվածի մասերի թվագրումը ուղղել:
12. Նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «<ե>> և 3-րդ մասի «<դ>> ենթակետում «<կարող է ներկայացնել>> բառերը առաջարկում ենք փոխարինել «<ներկայացնում է>> բառերով:

13. Նախագծի 13-րդ հոդվածի 4-րդ մասի <<զ>> ենթակետից հանսվ <<առաջարկում է>> բառերը:
14. Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին պարբերությունում «Տեսուչներ» բառը տրված է հոգնակի, մինչդեռ իրենց պարտավորություններում՝ եզակի ձևով՝ «իր»:
15. Նախագծի 14-րդ հոդվածով, որպես կրթության ավագ պետական տեսուչի (տեսչության ստորաբաժանման (բաժնի) կամ տարածքային մարմնի ղեկավարի) լիազորություն, սահմանվել է, որ «իր իրավասության շրջանակներում տալիս է ստուգում իրականացնելու մասին հանձնարարագրեր» մինչդեռ Նախագծի 3-րդ հոդվածով «Ստուգում» հասկացություն սահմանված չէ:
16. Նախագծի 18-րդ հոդվածում <<Հոդված 16>> վերնագրում և տեքստում <<կրթության բնագավառի>> բառերից հետո լրացնել <<պետական>> բառով:
17. Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Տեսչավորումն իրականացվում է կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից՝ տեսչության տարեկան աշխատանքային ծրագրի և ստուգումների ժամանակացույցի հիման վրա տրված հանձնարարագրով», որով հակասություն է առաջանում Նախագծի 14-րդ հոդվածով սահմանված, որպես կրթության ավագ պետական տեսուչի (տեսչության ստորաբաժանման (բաժնի) կամ տարածքային մարմնի ղեկավարի) լիազորությանը, այն է՝ «իր իրավասության շրջանակներում տալիս է ստուգում իրականացնելու մասին հանձնարարագրեր»:
18. Նախագծի 19-րդ հոդվածի 5-րդ մասից առաջարկում ենք հանել <<անընդմեջ>> բառը:

2. Ուսումնասիրվող սուբյեկտը հանձնարարականի կատարման մասին պարտավոր է պատշաճ ձևով տեղյակ պահել սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված լիազորություն ունեցող պաշտոնատար անձանց:

3. Հանձնարարականը չկատարելը և (կամ) դրա վերաբերյալ պատշաճ ձևով չտեղեկացնելը հիմք է հանդիսանում ուսումնական հաստատության ղեկավարին, օրենքով սահմանված կարգով, պատասխանատվության ենթարկելու առաջարկություն ներկայացնելու համար»:

### ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

#### «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

### 1. Անհրաժեշտությունը

«Կրթության պետական տեսչության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում տեսչական բարեփոխումների իրականացմամբ, կրթական համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմամբ և կրթության ոլորտում իրականացվող պետական վերահսկողության գործընթացը կարգավորող իրավական ակտերի առանձին դրույթներում առկա տարընթերցումների ու թերությունների շտկմամբ:

Օրենքի նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել 30.12.2010թ. ՀՀ կրթության և գիտության նախարարի թիվ 1806-Ա/Ք հրամանով հաստատված կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագիրը և ՀՀ կրթության պետական տեսչության 2011թվականի աշխատանքային ծրագիրը:

### 2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

ՀՀ կրթության պետական տեսչությունը կրթության բնագավառի պետական վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության այն ուսումնական հաստատություններում, որոնք իրականացնում են միայն հանրակրթական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր: Վերահսկողության դաշտից դուրս են գտնվում մասնագիտական կրթության մյուս երկու՝ միջին և բարձրագույն մասնագիտական ոլորտները:

Կրթության շարունակականության պայմաններում, հանրակրթության և մասնագիտական կրթության ոլորտում ներկայումս առկա չէ կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների կիրառման, կրթության որակի առկա վիճակի միասնական պատկերը:

Մասնագիտական կրթության առաջին երկու՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական աստիճանները կարգավորվում են «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սակայն դրանցից առաջինի նկատմամբ ՀՀ կրթության պետական տեսչությունը իրականացնում է պետական վերահսկողություն, իսկ մյուսի նկատմամբ՝ ոչ:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքը հանդիսանալով ՀՀ կրթության պետական տեսչության գործունեության օրենսդրական դաշտի հիմնական բաղկացուցիչներից, փաստացի ամբողջովին չի ապահովում ուսումնական հաստատությունների կողմից իրականացվող պետական կրթական ծրագրերի վերահսկողության գործընթացը:

### 3. Կարգավորման նպատակը և բնույթը

Օրենքի նախագիծը նպատակ ունի կրթության ոլորտում իրականացնել միասնական պետական վերահսկողություն: Այն հնարավորություն կտա ունենալ պետական կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների կիրառման, կրթության որակի առկա վիճակի իրական և ամբողջական պատկերը Հայաստանի Հանրապետությունում:

Պետական կրթական ծրագրերի միասնական վերահսկողությունն իր հերթին կնպաստի ինչպես կրթության շարունակականության ընթացքում, այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում հնարավոր կոոպացիոն դրսևորումների նվազեցմանը:

Առաջարկվող նախագծում թվարկված են ուսումնական հաստատություններում իրականացվող պետական վերահսկողության գործընթացի բաղադրիչները և պարզաբանվել դրանց ընթացակարգերը, հստակեցվել են տեսչության լիազորությունները, նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև տեսուչների պաշտոնների դասակարգումը, իրավասություններն ու պարտականությունները, հայտնաբերված խախտումների հետևանքների վերացմանն ուղղված վերահսկողությունն ու հետադարձ կապի ապահովումը:

Ենթադրյալ առաջարկվող կարգավորումների շնորհիվ կրթության պետական վերահսկողության շրջանակներում իրականացվող գործընթացների (տեսչավորում, նախատեսչավորում, թեմատիկ ստուգում, ուսումնասիրություն և մշտադիտարկում) հանգամանալի պարզաբանումը հնարավորինս կսահմանափակի այդ շրջանակներում տեսուչների գործողությունների և իրավասությունների ոչ միանշանակ գնահատումը, հետևաբար նաև հնարավոր կոոպացիոն ռիսկերը: Արդյունքում, վերահսկողության ամբողջ գործընթացը կդառնա պարզ, հնարավորինս թափանցիկ ու կանխատեսելի:

### 4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության պետական տեսչությունում:

### 5. Ակնկալվող արդյունքը

Օրենքի նախագծի ընդունմամբ ակնկալվում է Հայաստանի Հանրապետությունում ունենալ՝

- կրթության քննադատում իրականացվող միասնական պետական վերահսկողություն,
- կրթության ոլորտի օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ կրթական պետական վերահսկողության ամբողջական և կատարելագործված իրավական դաշտ,
- հնարավորինս նվազ կոոպացիոն ռիսկեր պարունակող պետական կրթական համակարգ: